կան տեղիս և կռուելոյ։ Ի սկզբանէ անտի և ըստ մտաց հրովարտակաց Սէլիմայ Արքայի, երկու ազգք ընկերովի տեղիս՝ ընկերութեամբ ուխտ առնել՝ եւ բնակութեան տեղիքն իւրաքանչիւր ազգ անկախութեամբ ժառանգել. վերջապէս յայտնի ծանուցաւ երկուց կողմանց վարիլ ըստ իմաստից և զօրութեան հրովարտակաց Սէլիմայ Արքայի. և Երեսփոխանք իւրաքանչիւր ազգաց հաճեցան և ընկալան յանձն առին և խոստացան՝ առնել այնպէս. և այսպէս բոլորովին բարձաւ խռովութիւնն և տեղի ետ ատելութիւնն, և Դենպետն միաբանութեամբ արար Իլամ եւ մատոյց Թագաւորութեանս իմոյ, ըստ զօրութեան գրեալ Իլամին, եւ զհրովարտակս բարեյիշատակ Նախնոյն իմոյ Սէլիմայ Արքայի տուեալ երկուց ազգաց հանդերձ ոճովն օրինակեալ արձանացան, զհաստատութիւն նոցին, զհանգամանս դատաստանին և զիմաստս Իլամին բովանդակելով՝ տուաւ երկուց ազգաց հրովարտակ, և ապա արձանագրեցաւ յամենայն Դիւանս և 'ի Դատարանս, և Կայսերական հրամանաւ նշանակեցաւ 'ի վերին կողմն արձանագրութեանց սակս գործադրութեանց նոցին, և հրամայեցաւ գործել և առնել ըստ մտաց Իլամին Դատաւորաց, և զգուշանալ 'ի հակառակէ նորին։ Որոյ վասն եւ 'ի Կայսերական Սենեկէս պատուական հրովարտակս եւ տուաւ 'ի ձեռս ազգին Հայոց։ Արդ՝ զհրովարտակս Սէլիմայ Արքայի հիմն ընտրելով՝ եւ գործելոյ ըստ մտաց Իլամին, երկուքին ազգք 'ի տաճարին Ս. Յարութեան սեփհական տեղիս անկախութեամբ՝ եւ ընկերովի տեղիս ընկերութեամբ, 'ի սկզբանէ անտի որպիսի եղանակաւ ուխտ արարեալ իցեն՝ ըստ առաջնոյն ուխտ արասցեն և բնակեսցին, եւ վասն սոցին իրաց մի՛ լիցի երբէք խռովութիւն 'ի միջի իրերաց 'ի պատճառս որ և իցէ իրաց, յինչ և իցէ ժամանակս, և եթէ լիցի, երբէք ունկնդրութիւն մի՛ լիցի։ Սակս գործադրութեան և կամօք բարձրելոյն Աստուծոյ՝ Իլամին այնորիկ հարկ էր Կայսերական ազգու հրամանիս, 'ի հաստատութիւն դաշնագրոյն Օմարայ տուեալ Յունաց, և հրովարտակին Սէլիմայ, և զիլամն այն բովանդակելով։ Նմանապէս ըստ իմաստից հրովարտակիս այսմիկ՝ տուաւ այլ հրովարտակ 'ի ձեռս ազգին Յունաց։ Եւ յետ այնորիկ